



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

No 1445 - Ա/Ք

«01» 10 2010

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0612 «ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ՐՍՏ ՀԱՄԱՍԵՌ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԵՂ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 8 արձանագրային որոշման 14-րդ՝ «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների սշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» կետով հավանության արժանացած հայեցակարգի 4.7 կետը, ՀՀ ԿԳ նախարարի 2009թ. մայիսի 12-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տալու նպատակով ստեղծվող ոլորտային հանձնաժողովների կազմը՝ ըստ մասնագիտական խմբերի հաստատելու մասին» N 445-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունները, ինչպես նաև նպատակ ունենալով առանձին ուսումնական հաստատություններում մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկել 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:
2. Նախարարության աշխատակազմի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությանը՝ մինչև 2010 թվականի դեկտեմբերի 30-ը նախարարի հաստատմանը ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում փորձարկման նպատակով ներդրվելու է 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը:

3. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը ներդնել 2011թ. սեպտեմբերի 1-ից՝ մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկելու նպատակով:
4. «Կրթության ազգային ինստիտուտի» ՓԲԸ տնօրենին /Ն. Ղուկասյան/ ապահովել 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության պետական կրթական չափորոշիչի փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից ստացված վերլուծական հաշվետվությունների վերլուծությունը և լրամշակման անհրաժեշտության վերաբերյալ առաջարկի ներկայացումը:
5. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը ՀՀ արդարադատության նախարարություն պետական գրանցման ներկայացնել փորձարկման պարբերաշրջանի ավարտից և սահմանված կարգով վերանայելուց հետո:
6. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին:

ՆԱԽԱՐԱՐ



Ա. ԱՇՈՏՅԱՆ

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0612 «ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ԸՍՏ ՀԱՄԱՍԵՌ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

ԳԼՈՒԽ 1.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0612 «ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ԸՍՏ ՀԱՄԱՍԵՌ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության «Մասնագետ» որակավորման աստիճանի 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության համար մասնագիտացումներ չեն սահմանվել:
3. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտին շնորհվում է «Ապրանքագետ» որակավորում:
4. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝
 - 1) առկա,
 - 2) հեռակա,
 - 3) դրսեկության (էքստենսատ)
 - 4) հեռավար (դիստանցիոն):
5. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.
 - 1) կրթության առկա ձևով.

ա. միջնակարգ կրթության հիմքով՝	2 տարի
բ. հիմնական կրթության հիմքով՝	3 տարի
 - 2) կրթության հեռակա ձևով.

ա. միջնակարգ կրթության հիմքով՝	3 տարի
--------------------------------	--------
 - 3) դրսեկության (էքստենսատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով.կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստենսատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման:
6. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը՝ 2700 ժամ է, առավելագույն ծավալը՝ 4428 ժամ: Հիմնական կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0612 «ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ԸՍՏ ՀԱՄԱՍԵՌ-ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

7. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտությամբ «Ապրանքագետ» որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

1) մասնագետներ՝ առևտրային գործունեության, այդ թվում՝

ա. ապրանքագետ,

բ. ապրանքատեսակների զարգացման աշխատանքների,

գ. վերահսկիչ՝ սպասարկման կենտրոնի,

դ. համակարգող՝ ապրանքատեսակների զարգացման աշխատանքների,

ե. գործակալ՝ ապրանքատեսակների զարգացման,

զ. համակարգող՝ վաճառքի աշխատանքների,

է. համակարգող՝ վաճառակետերի զարգացման աշխատանքների,

ը. պատասխանատու՝ հիմնական հաճախորդների հետ աշխատանքների:

2) մասնագետներ՝ ձեռնարկատիրական գործունեության և կադրերի, այլ խմբեր չներառված, այդ թվում՝

ա. վերլուծաբան՝ շուկայի ուսումնասիրությունների,

բ. մասնագետ՝ իրացումը խթանող եղանակների մշակման,

գ. մասնագետ՝ տնտեսական գործունեության արդյունավետության գնահատման:

8. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտությամբ «Ապրանքագետ» որակավորված մասնագետի՝ զբաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

1. շուկայի վերլուծություն,

2. մրցունակ ապրանքների վերլուծություն,

3. ապրանքի ընդունումը ըստ որակի և քանակի,

4. ապրանքային խմբերի դասակարգում,

5. ապրանքների քիմիական բաղադրության վերլուծություն,

6. ապրանքների մասին տեղեկատվության տրամադրում,

7. ապրանքների ոչ սակագնային հատկանիշների դասակարգում,

8. ապրանքների որակի հսկողություն,

9. ապրանքի պահպանման, տեղավորման, փաթեթավորման պայմանների սահմանում,

10. վաճառքի կազմակերպում,

11. վաճառքի խորհրդատվություն,

12. վաճառքի խթանում,

13. սպառողների հետ արդյունավետ փոխհարաբերությունների հաստատում,

14. ապրանքատեսականու ձևավորում,

15. սանիտարահիգիենիկ պայմանների պահպանում,

16. աշխատանքի անվտանգության պայմանների պահպանում,

17. մարքեթինգային հետազոտության իրականացում,

18. ապրանքանիշի խթանման միջոցառումների իրականացում,

19. վաճառակետերում ապրանքի դիրքավորում,

20. տնտեսական գործունեության արդյունքների վերլուծություն,

21. ապրանքաշրջանառության գործարքների հաշվառում և ձևակերպում,

22. ապրանքի՝ հումքի, արտադրատեսակների, տարայի հաշվառում,

23. աշխատանքային արդյունավետ փոխհարաբերությունների սահմանում,

24. աշխատանքային ժամանակի արդյունավետ կառավարում,

25. ապրանքագիտական տեղեկատվության մշակում համակարգչային տեխնիկայի միջոցով:

ԳԼՈՒԽ 3.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0612

«ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ԸՍՏ ՀԱՄԱՍԵՌ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

9. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար ապահովելու է հետևյալ ընդհանուր պահանջները՝

- 1) մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններն ու հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքների կուտակումը,
- 2) աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողության ձևավորում,
- 3) որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողությունների ձևավորում,
- 4) մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողության ձևավորում,
- 5) մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտությունների ձևավորում,
- 6) իր և աշխատակիցների (առկայության դեպքում) մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողության ձևավորում,
- 7) մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն,
- 8) մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողության ձևավորում,
- 9) աշխատակիցների (առկայության դեպքում) աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները (լիազորության դեպքում) ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտությունների ձևավորում,
- 10) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարբեր կիրառելու կարողությունների ձևավորում:

ԳԼՈՒԽ 4.

ՊԱՀԱՆՁՆԵՐ 0612 «ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ԸՍՏ ՀԱՄԱՍԵՌ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ)»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ
ՆՎԱԶՍԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

10. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության «Ապրանքագետ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար ապահովելու է՝

- 1) ՀՀ Սահմանադրության, տվյալ զբաղվածության բնագավառը կարգավորող նորմատիվ հիմնական ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթների իմացություն,
- 2) հայոց լեզվի տիրապետում,
- 3) երկու օտար լեզուներով հաղորդակցում,
- 4) առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոնները տիրապետելու իմացություն,
- 5) ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,

- 6) անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,
- 7) հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների, վարվելակերպի, գործարար հաղորդակցման տարրական կանոնների իմացություն,
- 8) կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների վերաբերյալ իմացություններ:
11. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար ապահովելու է՝
- 1) էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկում,
 - 2) արտակարգ իրավիճակների մասին պատկերացումների ձևավորում և արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին տիրապետում, փրկարարական աշխատանքների կազմակերպման կառույցների և փրկարարական տեխնիկայի վերաբերյալ պատկերացումների ձևավորում, անհատական պաշտպանության միջոցների օգտագործման կարողություն:
12. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ապահովում է շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետումը՝ օգտվելով աղյուսակ 1-ում բերված մոդուլներից:
13. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար ապահովում է ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերումը՝ օգտվելով աղյուսակ 2-ում բերված մոդուլներից:

ԳԼՈՒԽ 5.

ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0612 «ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ԸՍՏ ՀԱՄԱՍԵՌ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

14. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.
- 1) միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության «Ապրանքագետ» որակավորմամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնա-օժանդակ անձնակազմի աշխատողները:
 - 2) հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, որոնք տվյալ բնագավառում ունեն միջին և բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում և (կամ) տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար բարձրագույն մասնագիտական կրթության որակավորումը և մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:
 - 3) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման ղեկավարը կարող է ունենալ մասնագիտական աշխատանքի փորձ և բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն:
 - 4) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա) ապահովում, որոնք բովանդակությամբ համապատասխանում են տվյալ մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ցանկին:

2) յուրաքանչյուր առարկայի և մոդուլի, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերի համար (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքների) ձևավորվում են համապատասխան բազաներ. դասագրքեր, ուսումնամեթոդական և մեթոդական նյութեր, ձեռնարկներ, ուղեցույցեր, գործնական խաղերի կամ իրավիճակների սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ (անհրաժեշտության դեպքում), երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

16. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

- 1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝
 - ա. ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների,
 - բ. մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական առարկաների,
 - գ. տնտեսագիտության տեսության հիմունքների,
 - դ. կառավարման հիմունքների,
 - ե. հաշվապահական հաշվառման հիմունքների,
 - զ. շուկայագիտության հիմունքների,
 - է. պարենային ապրանքների տեսական գիտելիքների,
 - ը. ոչ պարենային ապրանքների տեսական գիտելիքների,
 - թ. համակարգչային օպերատորության հիմունքների

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

- ա. ապրանքի որակի գնահատման,
- բ. քիմիայի

3) Մպորտային համալիր՝

- ա. մարզադահլիճ,
- բ. մարզահրապարակ

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ:

17. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական տարվա սկիզբը, առկա ուսուցման ձևի համար, սահմանվում է սեպտեմբերի 1-ը, իսկ հեռակա, դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցման դեպքում՝ համաձայն ուսումնական պլանների,

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանձանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,

4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախափրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,

5) հեռակա ուսուցման ձևի դեպքում ուսանողների հետ պարտադիր պարապմունքների տարեկան ծավալը առնվազն 160 ժամ է:

6) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամ,
7) ն ախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելազործում են իրենց գործնական հմտությունները,

2) պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով,

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները,

4) պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման մասնագետները, դասախոսները,

5) ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնաարտադրական աշխատասենյակներում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում,

6) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսանողների միջանկյալ ատեստավորում՝ ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով: Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել արդյունքի (մոդուլի) յուրացման ընթացքում կամ ավարտին,

2) որակավորման շնորհում՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման միջոցով,

3) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին: Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:

4) շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:

5) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է երաշխավորի սույն չափորոշչով 0612 «Ապրանքագիտություն» մասնագիտությամբ «Ապրանքագետ» որակավորմամբ մասնագետի համար սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանությունը:

ԳԼՈՒԽ 6.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0612 «ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ԸՍՏ ՀԱՄԱՍԵՌ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է հաշվի առնելով 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը, որը չպետք է սահմանափակի ուսումնական գործընթացի իրականացման եղանակների, ձևերի, մեթոդների ընտրության հնարավորությունները:

21. Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս՝

- 1) օգտվելով սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանից կազմում և հաստատում է մասնագիտության ուսումնական պլանը,
- 2) կարող է մասնագիտության ուսումնական պլանը կազմելիս փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանուր պահանջները,
- 3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը՝ պահպանելով արդյունքները և կատարման չափանիշները,
- 4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,
- 5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,
- 6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գ ործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահարգիտ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,
- 7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:

Աղյուսակ 1

Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը « Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Կ Ց Մ Ա Ն Հ Մ Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր »	
Մոդուլի դասիչը	ԱՀՀ 04 - 10 - 001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Սահմանել ուսումնառության անձնական նպատակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները, բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:
Ուսումնառության արդյունք 2	Կատարել բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդակցություն պարզ թեմաների և տեքստերի վերաբերյալ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է օգտագործում բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածքը, բ. ճիշտ է կատարում տեղեկատվության առանձնացումը, խմբավորումը է նպատակային, գ. ճիշտ է իրականացնում հաղորդակցումն հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:
Ուսումնառության արդյունք 3	Նախաձեռնել, պատրաստել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, (պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը), բ. ճիշտ է ձևակերպում, արտահայտում և պաշտպանում իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները, գ. ճիշտ է ներկայացնում համոզելու կարողությունը, դ. ճիշտ է կատարում ամփոփումը, եզրափակումը:
Ուսումնառության արդյունք 4	Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,

	բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները, գ. ճիշտ է օգտագործում խոսքի համապատասխան կառուցվածքը մեկնաբանման ընթացքում:
Ուսումնառության արդյունք 5	Կատարել փաստաթղթավորում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը ըստ դրանց նշանակության (դիմում, ինքնակենսագրություն(տրված տարբեր տեսակի ֆորմատներով), պաշտոնական և ոչ պաշտոնական նամակներ, արձանագրություն, երաշխավորագիր և այլն), բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը, գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱԱ Օ 04-10-002
Մոդուլի նպատակը	Մովորողի մոտ ձևավորել կազմակերպություններում աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական հիմքերը և դրույթները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը, բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը, գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը, դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները, ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը, զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,

	բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը, գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները, դ. ճիշտ է ներկայացնում բարձր ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել արտադրությանը ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում արտադրության նկատմամբ սանիտարահիգիենիկ հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները, դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը, բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը, գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ, դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները, ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը, զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՕՊՀ-4-10-003
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսում է սովորողին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին և Windows օպերացիոն համակարգին, տալ տարրական գիտելիքներ Microsoft Office փաթեթի WORD տեքստային խմբագրի և Excel հաշվարկային ծրագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, փաստաթղթերի պահպանման, տպագրման, հաշվարկային փաստաթղթեր ստեղծելու, խմբագրելու, պարզագույն խնդիրներ կազմելու և լուծելու, ինչպես նաև ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել համակարգչի կառուցվածքը, Windows օպերացիոն համակարգը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սիստեմային բլոկի կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում մոնիտորի կառուցվածքը,

	<p>գ. ճիշտ է ներկայացնում մկնիկի կառուցվածքը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ստեղնաշարի կառուցվածքը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում տեղեկատվություն լրացուցիչ սարքավորումների մասին,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում աշխատանքային սեղանը և նրա կարգավորումները, խնդիրների վահանակը, արագ թողարկման և ինդիկացիոն վահանակները և նրանց կարգավորումները, Windows օպերացիոն համակարգի օբյեկտներն ու էլեմենտները, ֆայլ, թղթապանակ և պատուհան հասկացությունները:</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Հասկանալ WORD և EXCEL ծրագրերի նշանակությունը, կարողանալ բացատրել ծրագրերի կառուցվածքը, կարողանալ օգտագործել New, Open, Close և այլ ստանդարտ և ֆորմատավորման վահանակների վրա գտնվող գործիքներ</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում Microsoft Word և Excel ծրագրերի պատուհանների կառուցվածքը,</p> <p>բ. ճիշտ է ստեղծում նոր փաստաթուղթ Word և Excel ծրագրերով,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ստեղնաշարի օգնությամբ մուտքագումը,</p> <p> գա. տեքստ (առանց ֆորմատավորման)</p> <p> գբ. մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ)</p> <p> գգ. սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ)</p> <p> գդ. թվանշաններ</p> <p>դ. ճիշտ է տեղաշարժում է տեքստային ցուցիչը տեքստի մեջ,</p> <p>ե. ճիշտ է կատարում տարրական ուղղումներ և խմբագրումներ տեքստում,</p> <p>զ. ճիշտ է փակում և պահպանում է փաստաթուղթը,</p> <p>է. ճիշտ է բացում է առկա փաստաթուղթը,</p> <p>ը. ճիշտ է մուտքագրում և կազմում է հաշվարկային փաստաթղթեր:</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Կատարել տեքստային և հաշվարկային փաստաթղթերի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է կատարում բառերի և տեքստային հատվածների նշում,</p> <p>բ. ճիշտ է կատարում մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում,</p> <p>գ. ճիշտ է կատարում տողերի հավասարեցում,</p> <p>դ. ճիշտ է փոխում միջտողային տարածությունները,</p> <p>ե. ճիշտ է փոխում է տեքստի գույնը,</p> <p>զ. ճիշտ է փոխում տեքստի գունային ֆոնը,</p> <p>է. ճիշտ է փոխում պարբերության խորությունները լուսանցքներից,</p> <p>ը. ճիշտ է կարողանում ֆորմատավորման կատարված գործողությունները չեղյալ հայտարարել (հրաժարվել),</p> <p>թ. ճիշտ է վերականգնում ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները,</p>

	<p>ժ.ճիշտ է կրկնում է ֆորմատավորման վերջին գործողությունը,</p> <p>ի. փոխում է լուսանցքների խորությունները< ընտրում է էջի ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքերը, ընտրում է թղթի չափերը,</p> <p>լ.ճիշտ է կատարում տեքստի պատճենահանումը,</p> <p>խ. ճիշտ է կատարում տեքստի տեղափոխումը,</p> <p>ծ. ճիշտ է տողադարձ անում տեքստը,</p> <p>կ. ճիշտ է կատարում էջերի համարակալումը:</p>
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել փաստաթղթի պահպանման գործողությանը
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի պահպանման իմաստը,</p> <p>բ. ճիշտ է պահպանում նոր ստեղծված փաստաթուղթը,</p> <p>գ.ճիշտ է պահպանում փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:</p>
Ուսումնառության արդյունք 5	Կատարել աղյուսակների կազմում և խմբագրում
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է կարողանում պատրաստել աղյուսակ,</p> <p>բ. ճիշտ է մուտքագրում տեքստը աղյուսակի մեջ,</p> <p>գ.ճիշտ է կատարում ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ,</p> <p>դ.ճիշտ է ավելացնում նոր տողեր և նոր սյուններ աղյուսակի մեջ,</p> <p>ե. ճիշտ է ջնջում է աղյուսակի տողերը և սյունները,</p> <p>զ.ճիշտ է փոխում սյունակի լայնությունը մկնիկի օգնությամբ,</p> <p>է.ճիշտ է փոխում է տողի բարձրությունը մկնիկի օգնությամբ,</p> <p>ը.ճիշտ է փոխում աղյուսակի գծերի գույնը,</p> <p>թ. ճիշտ է կատարում աղյուսակի, տողի և սյունի գունավորումը:</p>
Ուսումնառության արդյունք 6	Կատարել տեքստային և հաշվարկային փաստաթղթերում գրաֆիկական օբյեկտների ներդրում, դրանց հետ տարրական խմբագրման գործողություններ
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է գծագրում գրաֆիկական օբյեկտներ,</p> <p>բ. ճիշտ է գծագրում գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autosshapes պատուհանի պատրաստի ձևերը,</p> <p>գ. ճիշտ է գծագրում կանոնավոր պատկերներ,</p> <p>դ. ճիշտ է ձևավորում գրաֆիկական օբյեկտները</p> <p>դա. տեղափոխում է դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ,</p> <p>դբ. պատճենում է,</p> <p>դգ. պտտում է,</p> <p>դդ. շրջում է,</p>

	<p>դե. փոխել չափերը.</p> <p>ե.ճիշտ է խմբավորում գրաֆիկական օբյեկտները,</p> <p>զ. ճիշտ է հավասարեցնում գրաֆիկական օբյեկտները,</p> <p>է. ճիշտ է գծագրում տեքստային բլոկները,</p> <p>ը. ճիշտ է գունավորում գրաֆիկական օբյեկտները,</p> <p>թ.ճիշտ է երանգավորում գրաֆիկական օբյեկտները:</p>
Ուսումնառության արդյունք 7	Տպագրել փաստաթուղթը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է կարողանում նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում Print պատռահանի ֆունկցիաները,</p> <p>գ. ճիշտ է տպագրում է փաստաթուղթը:</p>
Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել ինտերնետում աշխատելու գործընթացը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում Ինտերնետ հասկացության նշանակությունը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում Internet Explorer ծրագիրը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում Ինտերնետային Հասցե հասկացությունը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում History հրամանի նշանակությունը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում Favorites հրամանի նշանակությունը,</p> <p>զ.ճիշտ է ներկայացնում Stop հրամանի նշանակությունը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում Refresh հրամանի նշանակությունը,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում Back և Forward կոճակների նշանակությունը,</p> <p>թ. ճիշտ է պատճենում տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից,</p> <p>ժ. ճիշտ է պատճենում գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից,</p> <p>ժա. ճիշտ է կատարում է ինտերնետային ծառայությունների ինֆորմացիայի որոնումը,</p> <p>ժբ. ճիշտ է օգտվում ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,</p> <p>ժգ. ճիշտ է ներկայացնում Էլեկտրոնային փոստի նշանակությունը,</p> <p>ժդ. ճիշտ է կարողանում ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակները:</p>

Միջին մասնագիտական կրթության 0612 «Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԸ-4-10-001
Մոդուլի նպատակը	Տրամադրել ուսանողին բավարար չափով գիտելիքներ և ունակություններ ապրանքագիտության տեսության վերաբերյալ
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ապրանքագիտության տեսության առարկայի էությունը և խնդիրները
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում ապրանքագիտության առարկան և հիմնական կատեգորիաները, բ. ճիշտ է ներկայացնում պահանջմունքի բովանդակությունը, գ.ճիշտ է բացահայտում ապրանքների սպառողական արժեքը, դ.ճիշտ է ներկայացնում ապրանքագիտության մեթոդը և կապը այլ գիտությունների հետ, ե.ճիշտ է սահմանում է ապրանքագիտության խնդիրները:
Ուսումնառության արդյունք 2	Մեկնաբանել ապրանքների դասակարգման և կոդավորման սկզբունքները
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում ապրանքների դասակարգման նշանակությունը, սկզբունքները և կանոնները, բ.ճիշտ է բորոշում ապրանքների դասակարգման հիմնական հատկանիշները, գ. ճիշտ է ներկայացնում ապրանքների դասակարգման ձևերը, դ.ճիշտ է ներկայացնում ապրանքների կոդավորումը:
Ուսումնառության արդյունք 3	Կատարել ապրանքների տեսականու դասակարգում
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում ապրանքների տեսականու բնորոշումը, ձևերը, բ.ճիշտ է ներկայացնում դասակարգման հատկանիշները, գ.ճիշտ է ներկայացնում տեսականին բնութագրող հիմնական ցուցանիշները, դ.ճիշտ է վերլուծում տեսականու կառավարումը և ձևավորումը, ե.ճիշտ է ներկայացնում նոր արտադրանքի ընտրության ժամանակ հաշվի առնվող չափանիշները /ապրանքների առաքման և արտադրական հնարավորությունները բնութագրող չափանիշները:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ապրանքներին ներկայացվող պահանջները

Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է ներկայացնում ապրանքին ներկայացվող ընդհանուր պահանջները, բ.ճիշտ է ներկայացնում ապրանքների սպառողական հատկությունների բնութագիրը, գ.ճիշտ է բացատրում ապրանքի սպառողական նշանակությունը, հուսալիության, էրգոնոմիկական, գեղագիտական, էկոլոգիական, անվտանգության հատկությունները, դ.ճիշտ է մեկնաբանում ապրանքի որակ հասկացությունը և ներկայացնում որակի ցուցանիշները, ե.ճիշտ է ներկայացնում որակի ցուցանիշները ըստ խմբերի բնութագրվող հատկությունների թվի, հատկությունների բնույթի, արտահայտման միավորի որոշման մեթոդի:</p>
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ապրանքի որակին ներկայացվող գործոնները
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է մեկնաբանում որակի գործոնների դասակարգումը, բ. ճիշտ է ներկայացնում նյութերի քիմիական, ֆիզիկական, կենսաբանական հատկությունների բնութագրերը, գ.ճիշտ է ներկայացնում ապրանքների որակի փոփոխություն առաջացնող գործոնների բնութագիրը, դ.ճիշտ է ներկայացնում ապրանքների որակի պահանջներին նպաստող հիմնական գործոնները:</p>
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել ապրանքների վերաբերյալ հայերեն տեղեկատվության մակնշման ձևերին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ապրանքի վերաբերյալ տեղեկատվության դերը, բ.ճիշտ է մեկնաբանում ապրանքի վերաբերյալ տեղեկատվության դասակարգման հայտանիշները, գ.ճիշտ է ներկայացնում մակնիշման էությունը, դ. ճիշտ է ներկայացնում մակնիշա-պայմանական տեղեկատվությունը, ե. ճիշտ է մեկնաբանում ապրանքի շահագործման ուղեցույցային տեղեկատվության էությունը, զ. ճիշտ է մեկնաբանում գովազդ- տեղեկատվության էությունը:</p>
Ուսումնառության արդյունք 7	Բնութագրել ապրանքի որակի կառավարման, վերահսկման և գնահատման սկզբունքները
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է բնութագրում ապրանքի որակի կառավարման նպատակը ,հիմնական սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում որակի կառավարման համակարգը, գ.ճիշտ է ներկայացնում որակի ապահովման և բարելավման վերաբերյալ որոշումների ընդունման կարգը, դ.ճիշտ է ներկայացնում ապրանքի փորձարկման տեսակները, ե.ճիշտ է ներկայացնում ապրանքի որակի մակարդակի տեսակները, գնահատման կարգը, զ.ճիշտ է մեկնաբանում ապրանքների որակի մակարդակի գնահատման դիֆերենցիալ և խառը մեթոդների էությունը:</p>
Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել ապրանքի մրցունակության էությունը և գնահատումը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է մեկնաբանում ապրանքի մրցունակության էությունը, բ. ճիշտ է ներկայացնում ապրանքի մրցունակության ընդհանուր խմբերը, գ. ճիշտ է ներկայացնում ապրանքի մրցունակության գնահատման գործոնները,</p>

	դ.ճիշտ է ներկայացնում ապրանքի մրցունակության գնահատումը:
Ուսումնառության արդյունք 9	Ներկայացնել ապրանքների փորձաքննության սկզբունքները
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում ապրանքի փորձաքննություն հասկացողությունը, բ.ճիշտ է ներկայացնում ապրանքների փորձաքննության տեսակները, գ.ճիշտ է տարբերակում փորձագետի եզրակացությունը:
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԸ-4-10-002
Մոդուլի նպատակը	Տրամադրել ուսանողին բավարար չափով գիտելիքներ և ունակություններ տնտեսագիտության տեսության վերաբերյալ
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել տնտեսագիտության տեսության առարկայի էությունը և հիմնախնդիրները
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում տնտեսագիտության ուսումնասիրության առարկան, հիմնական ֆունկցիաները, մեթոդները, բ.ճիշտ է դասակարգում տնտեսական կատեգորիաները, գիտի, թե ինչ է տնտեսական օրենքը, գ.ճիշտ է բացատրում տնտեսական պահանջմունքների համակարգը, տնտեսական շահերը և դրանց տեսակները, դ.ճիշտ է ներկայացնում տնտեսության 3 հիմնական հարցերը. «ինչ», «ինչպես», «ուր համար», ե.ճիշտ է ներկայացնում տնտեսության համակարգի ձևերը, զ.ճիշտ է ներկայացնում «Մակրո» և «Միկրո» տնտեսությունների միջև տարբերությունը:
Ուսումնառության արդյունք 2	Բնութագրել արտադրության ռեսուրսները, գործունները և արտադրության տիպերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում արտադրության էությունը, ռեսուրսների գործունները և մակարդակները, բ. ճիշտ է ներկայացնում արտադրության ռեսուրսներ-գործուններ-եկամտի տեսակներ կապը, գ. ճիշտ է մեկնաբանում արտադրությունը բնութագրող հասկացությունները, դ. ճիշտ է բացատրում արտադրության համակենտրոնացման և ապակենտրոնացման միտումների ազդեցությունը կազմակերպության գործունեության վրա, ե.ճիշտ է սահմանում, թե ինչ է «աշխատանքի արտադրողականություն» և որոնք են դրա աճի գործոնները, զ.ճիշտ է բացահայտում արտադրության ընթացքի 4 փուլերը՝ ճգնաժամ-լճացում-աշխուժացում-վերելք:
Ուսումնառության արդյունք 3	Բացատրել շուկայական տնտեսության սկզբունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում շուկայական տնտեսության ձևավորման նախադրյալները և հիմնական տարրերը, բ. ճիշտ է ներկայացնում շուկայի գործառույթները հասարակական կյանքում և նրա հիմնական սկզբունքները,

	<p>գ. ճիշտ է ներկայացնում շուկայական տնտեսության «իդեալական» մոդելները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում շուկայական տնտեսության 3 հիմնական ոլորտները,</p> <p>ե. ճիշտ է բացատրում շուկայական տնտեսության հիմնական նպատակները, առավելությունները և թերությունները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում շուկայական ենթակառուցվածքը և նրա տարրերը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում սեփականության ձևերը և դերը տնտեսական հարաբերությունների համակարգում,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում պետության դերը շուկայական կառուցվածքի ձևավորման և զարգացման գործում:</p>
Ուսումնասության արդյունք 4	Ներկայացնել գնի և գնագոյացման սկզբունքները
Կատարման չափանիշներ	<p>ա ճիշտ է բնութագրում գին հասկացությունը, բացատրում է շուկայական գների ձևավորումը և կարգավորումը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում գնագոյացման վերաբերյալ 2 մոտեցումները՝ «օբյեկտիվություն» և «սուբյեկտիվություն»,</p> <p>գ. ճիշտ է մեկնաբանում շուկայական տնտեսության պայմաններում գների 3 հիմնական գործառույթները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում գների համակարգի 3 հիմնական ձևերը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում գների և սակագների տեսակները,</p> <p>զ. ճիշտ է սահմանում մեծածախ և մանրածախ գների հասկացությունները և ձևավորման եղանակը:</p>
Ուսումնասության արդյունք 5	Ներկայացնել ինֆլացիայի՝ արժեզրկման պատճառները և հետևանքները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է մեկնաբանում փողի գնողունակություն հասկացությունը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում «Ինֆլացիայի» և «Դեֆլացիայի» էությունը,</p> <p>գ. ճիշտ է բացահայտում ինֆլացիայի պատճառները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ինֆլացիայի տեսակները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում կախվածությունը գոյություն ունեցող գործազրկության և ինֆլացիայի միջև:</p>
Ուսումնասության արդյունք 6	Պարզաբանել շուկայական եկամուտների ձևավորման և բախշման սկզբունքները
Կատարման չափանիշներ	<p>ա ճիշտ է մեկնաբանում «եկամուտ» հասկացությունը,</p> <p>բ. ճիշտ է բացահայտում «ֆունկցիոնալ» հասկացությունը և նրա ձևերը,</p> <p>գ. ճիշտ է մեկնաբանում «ֆունկցիոնալ» և «ուղղահայաց» բնութագրերի տարբերությունը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում «Լորենցի կորի» կառուցման և «Ջինի գործակցի» հաշվառման էությունը,</p> <p>ե ճիշտ է ներկայացնում շուկայական եկամուտների օգտագործումը,</p> <p>զ. ճիշտ է պարզաբանում, թե ինչպես և ինչու պետությունը վերաբաշխում է եկամուտները,</p> <p>է. ճիշտ է մեկնաբանում է սղաճի էությունը և ձևերը:</p>
Ուսումնասության արդյունք 7	Ներկայացնել պահանջարկի և առաջարկի էությունը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում «պահանջարկի օրենք»-ի էությունը,</p> <p>բ. ճիշտ է բացատրում պահանջարկի փոփոխությունը, ոչ գնային գործոնները,</p>

	<p>գ. ճիշտ է ներկայացնում «առաջարկի օրենք»-ը ,</p> <p>դ. ճիշտ է բացահայտում առաջարկի մեծության վրա ազդող գործոնները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում առաջարկի և պահանջարկի կապը:</p>
Ուսումնառության արդյունք 8	Բնութագրել մակրոտնտեսության հիմնախնդիրները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում մակրոտնտեսության էությունը և ցուցանիշները,</p> <p>բ. ճիշտ է մեկնաբանում մակրոտնտեսական հիմնախնդիրները,</p> <p>գ. ճիշտ է մեկնաբանում, ինչպես է ձեռք բերվում «լրիվ հավասարակշռված» ՀԱԱ-ն,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում մակրոտնտեսության պարբերաշրջանի պատճառները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում մակրոտնտեսության կարգավորման էությունը և մեխանիզմը,</p> <p>զ. ճիշտ է մեկնաբանում տնտեսության պետական կարգավորման պատճառները և նպատակները,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում մակրոտնտեսության կարգավորման էությունը և մեխանիզմը:</p>
Ուսումնառության արդյունք 9	Ներկայացնել աշխատանքի էությունը և վարձատրման սկզբունքները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի դրդապատճառները և խթանները,</p> <p>բ. ճիշտ է մեկնաբանում աշխատանքի արտադրողականությունը և չափման մեթոդները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում մեկ աշխատողի արտադրանքը,</p> <p>դ. ճիշտ է մեկնաբանում աշխատավարձի չափի տարբերությունը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում աշխատավարձի ձևավորման շուկայական մեխանիզմը,</p> <p>զ. ճիշտ է մեկնաբանում նվազագույն աշխատավարձի՝ հասկացությունը:</p>
Ուսումնառության արդյունք 10	Մեկնաբանել տնտեսական աճի միտումները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում տնտեսության աճը և նրա միտումները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում տնտեսության աճի եղանակները,</p> <p>գ. ճիշտ է բացատրում տնտեսության աճի միտումները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում տնտեսության աճի աղբյուրները,</p> <p>ե. ճիշտ է բացատրում տնտեսության աճի պետական կարգավորումը և պետության տնտեսական դերը:</p>
Ուսումնառության արդյունք 11	Ներկայացնել հարկային և պետական բյուջեի համակարգերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է մեկնաբանում հարկերի տնտեսագիտական էությունը,</p> <p>բ. ճիշտ է սահմանում հարկային համակարգի տարրերը և հարկի վճարման եղանակները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում հարկերի տեսակները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում, թե ինչպես են ձևավորվում և ծախսվում պետական բյուջեի եկամուտները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում, թե ինչպես են դասակարգվում պետական բյուջեի ծախսերը:</p>
Ուսումնառության արդյունք 12	Ներկայացնել դրամավարկային համակարգը

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում դրամաշրջանառության էությունը և դերը հասարակական վերարտադրության մեջ, բ. ճիշտ է բնութագրում դրամի արժեզրկումը և կարգավորումը, գ. ճիշտ է նկարագրում վարկային հարաբերությունների համակարգը, դ. ճիշտ է ներկայացնում բանկային համակարգը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԸ-4-10-003
Մոդուլի նպատակը	Ուսանողը պետք է տիրապետի հաշվապահական հաշվառման վարման, ինչպես նաև հաշվետվությունների լրացման և վերլուծության հմտություններին:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՊԸ-4-10-002 «Տնտեսագիտության տեսության հիմունքներ» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլը համարվում է ձեռք բերված, եթե բոլոր արդյունքների համար կատարման չափանիշները բավարար չափով ապահովվել են:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաշվապահական հաշվառման էությունը և մեթոդը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում հաշվապահական հաշվառման էությունը, սկզբունքները, խնդիրները, առարկան և օբյեկտները, բ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման մեթոդը, նրա տարրերի համառոտ բնութագրումը, գ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման վարման և հաշվետվությունների կազմման սկզբունքները:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում տեղեկատվության ամփոփման և կրկնակի արտացոլման հաշվեկշռային մեթոդը, դրա դերն ու նշանակությունը, բ. ճիշտ է ներկայացնում հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության կառուցվածքն ու բովանդակությունը, կազմման սկզբունքները, գ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշիվներ, դրանց կառուցվածքը, տեսակները և գրանցումներ կատարելու կարգը, դ. ճիշտ է սահմանում կրկնակի գրանցման էությունը և ֆունկցիաները:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հաշվապահական հաշվառման հաշիվների դասակարգումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում հաշիվների դասակարգումը ըստ տնտեսական բովանդակության և կառուցվածքի, բ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի էությունը, կառուցվածքը և բովանդակությունը:

Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել պաշարների հաշվառումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում պաշարների դասակարգումն ու գնահատումը, բ. ճիշտ է ներկայացնում պաշարների անընդհատ և պարբերաբար կատարվող գրանցումները, գ. ճիշտ է բնութագրում նյութերի և արագամաշ առարկաների շարժի հաշվառումը, դ. ճիշտ է ներկայացնում պատրաստի արտադրանքի գնահատումը, ե. ճիշտ է սահմանում պաշարների վերագնահատման և գույքագրման արդյունքների հաշվառումը:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել դեբիտորական պարտքի հաշվառումը.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում դեբիտորական պարտքերի դասակարգումն ու գնահատումը, բ. ճիշտ է տարբերակում անհուսալի պարտքեր և կասկածելի պարտքեր, անհուսալի պարտքերի դուրս գրում և վերականգնում, գ. ճիշտ է ներկայացնում կանխավճարների հաշվառումը:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել ոչ ընթացիկ նյութական ակտիվների հաշվառումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում հիմնական միջոցների դասակարգումը, գնահատումը և հաշվառումը, բ. ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների մաշվածության հաշվառումը, գ. ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների նորոգման ծախսերի և կապիտալացվող ծախսումների հաշվառումը, դ. ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների վերագնահատման ու գույքագրման արդյունքների հաշվառումը:
Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել պարտավորությունների հաշվառումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում պարտավորությունների դասակարգումը, բ. ճիշտ է ներկայացնում երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերի և փոխառությունների հաշվառումը, գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի վարձատրության գծով պարտավորությունների հաշվառումը, դ. ճիշտ է սահմանում առհաշիվ անձանց հետ հաշվարկների հաշվառումը:
Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել եկամուտների և ծախսերի հաշվառումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում գործառնական եկամուտների և ծախսերի դասակարգումն ու հաշվառումը, բ. ճիշտ է ներկայացնում ոչ գործառնական եկամուտների և ծախսերի դասակարգումն ու հաշվառումը, գ. ճիշտ է ներկայացնում արտասովոր ծախսերի հաշվառումը:
Ուսումնառության արդյունք 9	Ներկայացնել սեփական կապիտալի հաշվառումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կանոնադրական կապիտալի հաշվառումը, բ. ճիշտ է ներկայացնում ֆինանսական հետևանքի հաշվառումը, գ. ճիշտ է ներկայացնում պարտադիր պահուստների ձևավորման հաշվառումը:

Ուսումնառության արդյունք 10	Բնութագրել ֆինանսական հաշվետվություններ, դրամական հոսքերի մասին հաշվետվություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում ֆինանսական հաշվետվության կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության պատրաստման առանձնահատկությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԸ-4-10-004
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի ուսուցումը ուսանողին հնարավորություն կտա իմանալու կառավարման հիմունքները:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: Անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք է համոզված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում:
Ուսումնառության արդյունք 1	Սահմանել կառավարման հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում կառավարման էությունը, սկզբունքները, խնդիրները և առարկան, բ. ճիշտ է ներկայացնում կառավարման տարրերի համառոտ բնութագրումը, գ. ճիշտ է սահմանում կառավարման ֆունկցիաները:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել կառավարման ֆունկցիան՝ պլանավորումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում պլանավորման խնդիրները և անհրաժեշտությունը, բ. ճիշտ է ներկայացնում գործառնական պլանավորման նպատակը և խնդիրները, գ. ճիշտ է ներկայացնում մարտավարական պլանավորման նպատակը և խնդիրները, դ. ճիշտ է ներկայացնում ռազմավարական պլանավորման նպատակը, խնդիրները և գործընթացը:
Ուսումնառության արդյունք 3	Բնութագրել կառավարման ֆունկցիան՝ կազմակերպումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում կազմակերպման նպատակը, խնդիրները և անհրաժեշտությունը, բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպչական կառուցվածքի նպատակը և բովանդակությունը:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել կառավարման ֆունկցիան՝ առաջնորդումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում առաջնորդման դերը, կարևորությունը և նպատակը, բ. ճիշտ է ներկայացնում առաջնորդման ֆունկցիաները, գ. ճիշտ է բնութագրում առաջնորդման ոճերը:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել կառավարման ֆունկցիան՝ վերահսկում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում վերահսկման դերը և նպատակը,

	բ. ճիշտ է ներկայացնում վերահսկման գործընթացը և տեսակները, գ. ճիշտ է ներկայացնում վերահսկման արդյունավետության հատկանիշները:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել մարդկային ռեսուրսների կառավարման սկզբունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում մարդկային ռեսուրսների կառավարման դերը և մեթոդները, բ. ճիշտ է ներկայացնում մարդկային ռեսուրսների գնահատման մեթոդները, գ. ճիշտ է ներկայացնում մարդկային ռեսուրսների խրախուսման և մոտիվացման մեթոդները դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի նկարագրության անհրաժեշտությունը և չափանիշները,
Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել արտադրության կառավարման սկզբունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում արտադրության կառավարման տեսությունը և մեթոդները, բ. ճիշտ է ներկայացնում արտադրության կառավարման գործընթացը, գ. ճիշտ է ներկայացնում արտադրության կառավարման կատարելագործման գործիքները, դ. ճիշտ է սահմանում ընդհանուր որակի կառավարման գործընթաց:
Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել ժամանակի կառավարման սկզբունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում ժամանակի կառավարման դերը և անհրաժեշտությունը բ. ճիշտ է ներկայացնում ժամանակի կառավարման արդյունավետ տնօրինման առանձնահատկությունները գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի կառավարման կանոնները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՇՈՒԿԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊԸ-4-10-005
Մոդուլի նպատակը	Ուսանողին տրամադրել գիտելիքներ մարքեթինգի հիմունքների, ապրանքանիշի ռազմավարության, համալիր մարքեթինգի և սպառողների հետ փոխհարաբերություններ գործընթացում
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՊԸ-4-10-002 «Տնտեսագիտության տեսության հիմունքներ» մոդուլը
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլը համարվում է ձեռք բերված, եթե բոլոր արդյունքների համար կատարման չափանիշները բավարար չափով ապահովվել են:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մարքեթինգի տեսությունը, էությունը և դերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում մարքեթինգի էությունը, սկզբունքները, խնդիրները և դերը, բ. ճիշտ է ներկայացնում մարքեթինգի տեսությունը, նրա տարրերի համառոտ բնութագրումը, գ. ճիշտ է ներկայացնում մարքեթինգի նպատակները և առաջադրանքը:
Ուսումնառության արդյունք 2	Վերլուծել մարքեթինգային հետազոտության մեթոդները և արդյունքները

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում մարքեթինգային հետազոտության դերն ու նշանակությունը, բ. ճիշտ է ներկայացնում մարքեթինգային հետազոտության տեսակները և անցկացման կարգը: գ. ճիշտ է ներկայացնում մարքեթինգային քանակական հետազոտության անցկացման կարգը, դ. ճիշտ է ներկայացնում մարքեթինգային որակական հետազոտության անցկացման կարգը, ե. ճիշտ է իրականացնում մարքեթինգային հետազոտության արդյունքների վերլուծություն, զ. ճիշտ է ներկայանում մարքեթինգային ռազմավարության մշակման մեթոդաբանությունը, է. ճիշտ է իրականացնում SWOT վերլուծություն:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել համալիրի մարքեթինգի՝ մարքեթինգ միքսի էությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում մարքեթինգ միքսի բովանդակությունը, գործոնները և ֆունկցիան, բ. ճիշտ է ներկայացնում 4P-երը՝ որպես մարքեթինգի կառավարման գործիքներ՝ արտադրանք, գին, վայրի և խթանում:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ապրանքանիշի ռազմավարությունը՝ բրենդ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բրենդի սահմանումը և նրա փուլերը, բ. ճիշտ է ներկայացնում ապրանքանիշի դերը տնտեսավարող սուբյեկտների և սպառողների համար, գ. ճիշտ է ներկայացնում ապրանքանիշի նպատակը, դ. ճիշտ է ներկայացնում ապրանքանիշի ռազմավարությունը՝ ապրանքանիշի համատեքստ, ապրանքանիշի դիրքավորում, ապրանքանիշի առաջնություն, ապրանքանիշի պորտֆելի կառավարում:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել վաճառքի ռազմավարությանը և խթանմանը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում վաճառքի էությունը և դերը, բ. ճիշտ է ներկայացնում վաճառքի արդյունքների վերլուծություն, գ. ճիշտ է ներկայացնում վաճառքի ռազմավարության առանձնահատկությունը, դ. ճիշտ է ներկայացնում վաճառքի խթանման մեթոդները և առանձնահատկությունը, ե. ճիշտ է ներկայացնում գովազդի դերը, մեթոդները, տեսակները և գովազդային քաղաքականություն:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել սպառողների հետ փոխհարաբերությունները՝ CRM
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում է սպառողների հետ փոխհարաբերությունների կառավարման դերը և առանձնահատկությունները, բ.ճիշտ է ներկայացնում սպառողների հետ փոխհարաբերությունների սկզբունքները գ.ճիշտ է ներկայացնում սպառողների հետ փոխհարաբերությունների տեսակները, դ.ճիշտ է ներկայացնում սպառողների հետ փոխհարաբերությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՄԻԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀՍՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	

Մոդուլի դասիչը	ԱՊԸ-4-10-006
Մոդուլի նպատակը	Մոդուլի նախատեսված է սովորողի մոտ ձևավորել է Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման գործունեության իրավական հիմքերը և դրա մասնակիցների իրավասությունը, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մշակման և կիրառման սկզբունքները, սահմանում է համապատասխանության գնահատման բնագավառում համապատասխանության հավաստման գործընթացին մասնակիցների հավատարմագրման, արտադրանքի իրացման պայմանները, համապատասխանության հավաստման մասնակիցների իրավունքները և պարտականությունները
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունաքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ստանդարտացման և համապատասխանության գնահատման հետ առնչվող հիմնական հասկացությունները և ընդհանուր դրույթները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ստանդարտացմանը վերաբերող իրավական հիմքերը, բ. ճիշտ է ներկայացնում ստանդարտացման նպատակը, գ. ճիշտ է ներկայացնում ստանդարտացման սկզբունքները, դ. ճիշտ է տարբերակում արտադրանքին վերաբերվող տեխնիկական կանոնակարգերը, ե. ճիշտ է ներկայացնում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի տեսակները, զ. ճիշտ է ներկայացնում ստանդարտների ընդունման և հաստատման ընթացակարգը, է. ճիշտ է ներկայացնում համապատասխանության գնահատման ձևերը:
Ուսումնառության արդյունք 2	Տարբերակել տեխնիկական կանոնակարգերը և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում, թե որոնք են տեխնիկական կանոնակարգերը, բ. ճիշտ է ներկայացնում, թե ինչպիսի պարտադիր պահանջներ պետք է սահմանեն տեխնիկական կանոնակարգերը, գ. ճիշտ է ներկայացնում տեխնիկական կանոնակարգերի ընդունման և հաստատման ընթացակարգերը, դ. ճիշտ է ներկայացնում տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի տարբերությունը, ե. ճիշտ է ներկայացնում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի տեսակները և դրանց բնույթը, զ. ճիշտ է ներկայացնում ստանդարտացման սկզբունքը:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել Հայաստանի Հանրապետության միջազգային ստանդարտացման կազմակերպությունների հետ անդամակցությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում Հայաստանի միջազգային համագործակցությունը,

	բ. ճիշտ է ներկայացնում Ստանդարտացման միջազգային կազմակերպություն /ԻՍՕ/ համագործակցությունը, ԻՍՕ ստանդարտները, դրանց ընդունումը և հաստատումը Հայաստանի Հանրապետությունում, գ. ճիշտ է ներկայացնում անդամակցությունը Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններին:
Ուսումնառության արդյունք 4	Կատարել համապատասխանության գնահատում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում համապատասխանության գնահատման ձևերը, բ. ճիշտ է ներկայացնում համապատասխանության գնահատման նպատակը:
Ուսումնառության արդյունք 5	Կատարել համապատասխանության հավաստման հասկացության պարզաբանում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում համապատասխանության հավաստման հասկացությունը, բ. ճիշտ է ներկայացնում համապատասխանության հավաստման ձևերը, գ. ճիշտ է ներկայացնում համապատասխանության կամավոր հավաստում և պարտադիր հավաստում, դ. ճիշտ է ներկայացնում համապատասխանության սերտիֆիկատը, հայտարարագիրը և նշանը, ե. ճիշտ է ներկայացնում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել արտադրանքի սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների մասին տեղեկատվություն
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում սերտիֆիկացման մարմիններ հասկացությունը, բ.ճիշտ է ներկայացնում փորձարկման լաբորատորիաներ հասկացությունը, գ.ճիշտ է ներկայացնում Հայաստանի հանրապետության տարածքում համապատասխանության, պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի իրացման և ծառայությունների մատուցման պայմանները, դ.ճիշտ է ներկայացնում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի` Հայաստանի հանրապետության տարածք ներմուծման պայմանները:
Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել հավատարմագրման գործընթացի կազմակերպումը
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում հավատարմագրում հասկացությունը, բ.ճիշտ է ներկայացնում հավատարմագրման իրականացվում է իրավական հիմքերը / իրավական ակտերի և միջազգային ԻՍՕ/ԻԷԿ 17000 համակարգի ստանդարտների պահանջներին (այսուհետ` հավատարմագրման չափանիշներ) համապատասխան/, գ.ճիշտ է ներկայացնում հավատարմագրման գործընթացը:
Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի եվ ծառայությունների համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողության էությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում պետական վերահսկողության հիմնական խնդիրներն են,

	բ. ճիշտ է ներկայացնում պետական վերահսկողություն իրականացնող մարմին լաբորատորիաներ հասկացությունը, գ. ճիշտ է ներկայացնում գլխավոր պետական տեսուչի և պետական տեսուչների իրավասությունները:
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊՐ-4-10-007
Մոդուլի նպատակը	Մոդուլը նախատեսված է սովորողի մոտ ձևավորել ապրանքների քիմիական բաղադրության մասին գիտելիքներ, ինչպես նաև սննդամթերքի բաղադրության մեջ մտնող կենսական կարևոր նյութերի՝ որպես էներգիայի աղբյուր դերը օրգանիզմի նյութափոխանակության գործընթացում: Մոդուլը սովորեցնում է նաև հումքի և սննդամթերքի քիմիական բաղադրությունից կախված, նրա արտադրության, տեխնոլոգիական պայմանների, պահպանման պայմանների ընտրության մասին գիտելիքներ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել սննդամթերքը որպես էներգիայի աղբյուր հասկացությանը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում պարենային ապրանքների դերը մարդու կենսունակության պրոցեսում, բ. ճիշտ է ներկայացնում պարենային ապրանքների քիմիական բաղադրությանը, գ. ճիշտ է տարբերակում սննդամթերքի մեջ մտնող օրգանական և անօրգանական նյութերը:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մարդու օրգանիզմի համար ջրի կարևոր նշանակությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում օրգանիզմի բիոքիմիական գործընթացների իրագործման համար: Ջրի նշանակությունը, բ. ճիշտ է ներկայացնում որոշ ապրանքատեսակներում ջրի տոկոսային քանակությունը, գ. ճիշտ է ներկայացնում ջրի հատկությունները, սննդամթերքի մեջ գոյություն ունեցող ջրի մոտավոր տարանջատումը 2 տեսակի՝ կապված և ազատ, դ. ճիշտ է ներկայացնում սննդամթերքի մեջ ջրի պարունակության և դրա բիոլոգիական արժեքի փոխադարձ կապը, ե. ճիշտ է ներկայացնում սննդամթերքի հատկությունից և նրա մեջ ջրի պարունակությունից կախված դրա պահման պայմանների ընտրությունը:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հանքային նյութերի նշանակությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հանքային նյութերի դերը օրգանիզմի կենսունակության գործում, բ. ճիշտ է ներկայացնում հանքային էլեմենտների դասակարգումը. միկրոէլեմենտներ, մակրոէլեմենտներ, ուլտրա միկրոէլեմենտները, գ. ճիշտ է թվարկում հանքային տարրերով հարուստ սննդամթերք:

Ուսումնառության արդյունք 4	Բնութագրել ածխաջրերի կենսական նշանակությունը, որպես էներգիայի աղբյուր
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում ածխաջրերի սահմանումը, բ.ճիշտ է ներկայացնում ածխաջրերով հարուստ մթերքները, գ.ճիշտ է ներկայացնում մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ ածխաջրի քանակությունը, դ.ճիշտ է բնութագրում ածխաջրերի տարանջատումը մոնոսախարիդների (պարզ շաքարներ), օլիգոսախարիդների (բարդ շաքարների) և պոլիսախարիդների (ոչ շաքարանման), ե.ճիշտ է ներկայացնում ածխաջրերի պարունակությունը ըստ առանձին սննդամթերքների:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել սննդամթերքի մեջ ազոտ պարունակող նյութերի պարունակության նշանակությունը
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է թվարկում սննդամթերքում ազոտ պարունակող քիմիական նյութերի ցանկը, բ.ճիշտ է ներկայացնում սպիտակուցների դերը օրգանիզմի կենսունակության գործում, գ.ճիշտ է ներկայացնում մարդու օրգանիզմի կողմից սպիտակուցի օրվա պահանջարկը, դ.ճիշտ է ներկայացնում ամինոթթուների դերը մարդու օրգանիզմի կենսունակության համար:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել սննդամթերքի մեջ պարունակող օրգանական թթուների, ճարպաթթուների բաղադրությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ճարպաթթուների նշանակությունը, բ. ճիշտ է ներկայացնում ճարպաթթուների դերը օրգանիզմի նյութափոխանակության գործում:
Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել օրգանիզմի կենսագործունեության վրա ազդող ֆերմենտների և վիտամինների դերը
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում վիտամինների և ֆերմենտների դերը օրգանիզմի կենսագործունեության մեջ, բ.ճիշտ է ներկայացնում սննդային հավելումները և դրանց դերը, գ.ճիշտ է ներկայացնում սննդամթերքում առավել հաճախակի հանդիպող վիտամինների անունները, դ.ճիշտ է ներկայացնում վիտամինների բացակայության ժամանակ օրգանիզմում առաջացող հիվանդությունները, ե.ճիշտ է ներկայացնում վիտամիններ A; B; D; E; C նշանակությունը օրգանիզմի իմունային համակարգի վրա:
Ուսումնառության արդյունք 8	Բնութագրել ոչ պարենային ապրանքների քիմիական բաղադրությունը
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է բնութագրում ըստ քիմիական կազմի ոչ պարենային ապրանքների դասակարգումը, բ.ճիշտ է ներկայացնում ցելյուլոզան թղթի ապրանքատեսակներում, գ.ճիշտ է բնութագրում պոլիմերային նյութերի կառուցվածքը, բնական և արհեստական պոլիմերներ, դ.ճիշտ է բնութագրում պոլիմերների օգտագործումը պլաստմասե ապրանքատեսակների արտադրությունում, ե.ճիշտ է բնութագրում ոսկերչական իրերի քիմիական կազմը, ոսկու տոկոսային բաղադրությունը ըստ նրանում պարունակող ոսկու քանակի, զ.ճիշտ է ներկայացնում ածխածնի ագրեգատային վիճակները և ածխածինը` որպես ադամանդի հումք, է.ճիշտ է բնութագրում սիլիկատային միացությունները հախճապակե տարաներում:
Ուսումնառության արդյունք 9	Կատարել ապրանքների քիմիական բաղադրությունից կախված դրա պահման, տեղափոխման, շահագործման

	պայմաններին ներկայացվող պահանջների վերլուծություն
Կատարման չափանիշներ	<p>ա.Ճիշտ է տարբերակում ապրանքների քիմիական և ֆիզիկական կառուցվածքից կախված դրանց վրա ազդող գործոնները. ֆիզիկոքիմիական, մեխանիկական, կենսաբանական,</p> <p>բ.Ճիշտ է ներկայացնում հիդրոսկոպիկ նյութերը և դրանց պատրաստված ապրանքները և դրանց որակի վրա խոնավության ազդեցությունը,</p> <p>գ.Ճիշտ է ներկայացնում խոնավության բացակայության ազդեցությունը որոշ ապրանքների որակական ցուցանիշների վրա; Գիտի այդպիսի ապրանքների տեղափոխման և պահման համար անհրաժեշտ ստանդարտ պայմանները 65±5%,</p> <p>դ.Ճիշտ է ներկայացնում ապրանքների պահման և տեղափոխման ժամանակ դրանց վրա ազդող մեխանիկական գործոնները. հարված, ձգում, ճկում և այլն,</p> <p>ե.Ճիշտ է բնութագրում մեխանիկական ազդեցությունից խուսափելու համար ապրանքների պահման և տեղափոխման համար տարրաների ընտրությունը ըստ ապրանքատեսակների,</p> <p>զ.Ճիշտ է ներկայացնում ապրանքների պահման և տեղափոխման ժամանակ ազդող կենսաբանական գործոնները. Միկրոօրգանիզմներ, կրծողներ, սնկային վարակ, միջատներ, թռչուններ և այլն:</p>
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՊՐ-4-10-008
Մոդուլի նպատակը	Մովորողի մոտ ձևավորել ոչ պարենային ապրանքների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների ներմուծման, արտահանման, արտադրության, մշակման, վերամշակման, փաթեթավորման, մակնշման, փոխադրման, պահման, իրացման, ինչպես նաև առևտրի և հանրային սննդի ոլորտում ծառայությունների մատուցման փուլերում անվտանգության հետ առնչվող գիտելիքների իմացություն: Մովորողի մոտ ձևավորել սպառողների և արտադրողների (կատարողների, վաճառողների) միջև ապրանքների վաճառքի ժամանակ ծագող հարաբերությունների կարգավորման հմտություն, ձևավորել սպառողներին պատշաճ որակի և սպառողների կյանքի ու առողջության համար անվտանգ ապրանքների մատուցման, ինչպես նաև ապրանքների և դրանք արտադրողների (կատարողների, վաճառողների) մասին տեղեկատվության տրամադրման հմտություն:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ապրանքների շրջանառության բոլոր փուլերում որակի և անվտանգության հետ առնչվող հիմնական հասկացությունները և ընդհանուր դրույթները

Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է ներկայացնում ապրանքների անվտանգությանը և որակին ներկայացվող իրավական հիմքերը, բ.ճիշտ է ներկայացնում ապրանքի որակ հասկացությունը և դրա էական խախտումը, գ.ճիշտ է տարբերակում, թե որոնք ենք համարվում սննդամթերք և որոնք չեն համարվում սննդամթերք, որոնք են ոչ պարենային ապրանքներ, դ.ճիշտ է ներկայացնում սննդամթերքի հետ շփվող նյութեր հասկացությունը, ե.ճիշտ է ներկայացնում պարենային հումքը, զ.ճիշտ է ներկայացնում հատուկ նշանակության սննդամթերքը, է.ճիշտ է ներկայացնել սննդամթերքի անվտանգության հասկացությունը, ը.ճիշտ է ներկայացնում, թե որոնք են մնացորդային նյութերը և որոնք են սննդային հավելումները, որոնք են գենետիկորեն ձևափոխված մթերքները, թ.ճիշտ է ներկայացնում սննդամթերքի անվտանգության ապահովման պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու խնդիրները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել առանձին ապրանքատեսակների անվտանգությանը ներկայացվող պահանջները
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է ներկայացնում ապրանքի անվտանգությունը, բ.ճիշտ է ներկայացնում սննդամթերքի արտադրությանը ներկայացվող պահանջները, գ.ճիշտ է ներկայացնում սննդամթերքի անվտանգությանը սպառնացող ռիսկի (վտանգի) վերլուծություն վտանգի աղբյուրի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման (ՎԱՎԿԿՀ) համակարգը, դ.ճիշտ է ներկայացնում սննդի շղթայի փուլերին և աշխատակիցներին ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջները:</p>
Ուսումնառության արդյունք 3	Կատարել ապրանքի (աշխատանքի) ծառայության, պիտանիության, ինչպես նաև երաշխիքային ժամկետների սահմանում
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է ներկայացնում պիտանիության ժամկետ հասկացությունը, բ.ճիշտ է ներկայացնում ապրանքների անվանացանկը, որի համար սահմանվում են պիտանիության ժամկետներ, գ.ճիշտ է ներկայացնում արտադրողի կողմից սահմանված պիտանիության ժամկետի ավարտից հետո օգտագործման համար ոչ պիտանի պարենային և ոչ պարենային ապրանքների անվանացանկը, դ.ճիշտ է ներկայացնում ապրանքների պիտանիության և երաշխիքային ժամկետների սահմանումը:</p>
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում իրացվող ոչ պարենային ապրանքների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների անվտանգությանը, մակնշմանը և փաթեթավորմանը ներկայացվող պահանջները
Կատարման չափանիշներ	<p>ա.ճիշտ է ներկայացնում, թե ինչ է մակնշումը, բ.ճիշտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում իրացվող ոչ պարենային ապրանքների, սննդամթերքի,</p>

